



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ

**Դասընթացի և ուսումնառության  
նյութերի պատրաստման և  
իրականացման մեթոդական  
ուղեցույց**

ԵՐԵՎԱՆ 2014

Դասընթացի և ուսումնառության նյութերի պատրաստման և իրականացման մեթոդական ուղեցույցը մշակվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվող «ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ծրագրի գործողությունների պլանի համաձայն ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից:

Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

07.02.2014 թ. (արձանագրություն № 6)

## Բովանդակություն

Ներածություն .....	4
Ուսուցման նորարարական մեթոդները .....	6
Ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաները ձևերը .....	12
Դասախոսի դերը դասընթացների կազմակերպման ժամանակ .....	14
Ուսուցման մեթոդները .....	16

## Ներածություն

Արդի ժամանակաշրջանում Բոլոնիայի գործընթացի համատեքստում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագետ պատրաստելու գործընթացում անընդհատ շեշտադրվում է ուսանողակենտրոն կրթության դերը: ՀԱԱՀ-ն այսօր ձգտում է դասախոսակենտրոն ուսուցումից անցում կատարել ուսանողակենտրոն ուսուցմանը: Այս գործընթացում կարևոր մաս է կազմում դասապրոցեսը և ուսանողի ուսումնառության գործընթացը: Այս ուղեցույցը աջակցելու է ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին դասընթացի և ուսումնառության նյութերի մշակման և ստեղծման գործընթացում:

Այսօր տեխնիկական միջոցների կիրառումը դասընթացի ժամանակ հնարավորություն է ընձեռում դասախոսին կիրառել մի շարք մեխանիզմներ, որոնք ուսումնառողին հնարավորություն կտան ավելի հեշտ յուրացնել դասընթացի բովանդակությունը: Այսպիսով, ինովացիոն տեխնոլոգիաները հանդիսանում են լավագույն միջոցը դասընթացների նախապատրաստման և իրականացման համար:

Դասընթացի կազմակերպման պատասխանատվությունը ամբողջովին կրում է դասախոսը: Սակայն ըստ ուսանողակենտրոն ուսուցման կանոնների նա դասընթացի ժամանակ պետք է լինի ուղղորդողի դերում, հետևաբար այսօր դասախոսը պետք է լինի հմուտ, դասընթացը կառավարի այնպես, որ մի կողմից ուսանողը լինի հիմնական դերակատար, իսկ մյուս կողմից կարողանա ինչ-որ իմաստով պլանավորի և իրականացնի ամբողջ գործընթացի սկիզբը և ավարտը: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն, քան ուղակի դասախոսությունն է, քանի որ իր դասընթացը իրականացնելու համար բավարար չէ ուսումնառողին միայն բովանդակության մատչելի և հասանելի ներկայացնելը, այլ անհրաժեշտ է, որ նա կիրառի տարբեր մեթոդներ, պատրաստի աշխատանքային նյութեր, որոնց կիրառման շնորհիվ ուսանողը կամա, թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից:

Դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման անցման գործընթացը ենթադրում է նաև, որ դասընթացը պետք է կառուցվի այնպես, որ ուսանողը ձեռք բերի ակնկալող վերջնարդյունքները: Վերջնարդյունքների

ձևավորման գործընթացն ուղիղ համեմատական է դասախոսի կողմից ընտրած դասավանդման և ուսումնառության մեթոդներին, ինչպես նաև ուսանողի գնահատման մեթոդներին: Արդի դասապրոցեսում մեծ տեղ է զբաղեցնում ձևավորող գնահատման մեթոդը, որը հնարավորություն է տալիս դասախոսին հետադարձ կապ ապահովել ուսանողի հետ, ինչը նպաստում է ուսանողի ձեռքբերումների բարելավմանը:

Դասընթացի առարկայական ծրագիրը ձևավորելու ընթացքում դասախոսը պետք է հետևի ՀԱԱՀ-ի կողմից մշակված ձևաթերթին և ուղեցույցին:

## Ուսուցման նորարարական մեթոդները

Ուսանողակենտրոն ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է դասընթացը կազմակերպել այնպես, որ ուսանողը հայտնվի դասընթացի կենտրոնում, ձգտի ինքնուրույն ձեռք բերել հարցերի պատասխանները, սովորի օգտվել գրականությունից, կարողանան արագ գտնել և վերամշակել իրեն անհրաժեշտ տեղեկությունները, քանի որ ներկա տեղեկատվական հասարակությունում արդի մասնագետները անընդհատ ստիպված են յուրացնելու նոր գիտելիքներ, այդ պատճառով այսօրվա կրթության առաջանային խնդիրն է պատրաստել **ինքնակրթությամբ զբաղվելու ունակ, ստեղծագործող** մասնագետ:

Ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել առանցքայնորեն նախկինում կիրառվող մեթոդներից տարբեր մեթոդներ և մեխանիզմներ: Այդ մեթոդների մեջ իր ուրույն տեղն են զբաղեցնում ուսուցման նորարարական (ինովացիոն) մեթոդները: Նորարարություն հասկացուցումը թարգմանաբար անգլերենից նշանակում է «inter» - «փոխադարձ», «act»-«գործել»: Ինտերակտիվ ուսուցումը ճանաչողական գործընթացը կազմակերպելու հատուկ ուսուցման ձև է: Այն իր մեջ ներառում է հստակ և կանխատեսելի նպատակներ: Այդ նպատակներից մեկն էլ հարմարավետ կրթական միջավայր ստեղծելն է, որտեղ ուսանողը կամ ունկնդիրը կարող է զգալ իր հաջողությունը, մտավոր հետևողականությունը, որն ինքն իրենով կազմում է արդյունավետ ուսուցման բաղադրիչ:

**Մանկավարժության մեջ առանձնացնում են ուսուցման մի քանի մոդելներ՝**

1. **պասիվ** - ուսանողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «օբյեկտ» (լսում և նայում է),
2. **ակտիվ** – ուսանողը հանդես է գալիս որպես ուսուցանվող «սուբյեկտ» (ինքնուրույն աշխատանքներ, ստեղծագործական առաջադրանքներ)
3. **ինտերակտիվ** (նորարարական) – փոխազդեցություն: Նորարարական մոդելների օգտագործումն ուսուցման գործընթացում ենթադրում է առօրյա կյանքից մոդելների սիմուլյացիաներ, դերային խաղերի օգտագործում, ինչպես նաև

առաջադրված խնդիրների համատեղ լուծում: Բացառվում է կրթական գործընթացին մասնակցող անդամների կամ որևէ գաղափարի զերիշխանությունը: Ներգործության օբյեկտից ուսանողը վերաձվում է փոխազդեցության սուբյեկտի: Նա ինքն է ակտիվորեն մասնակցում կրթության գործընթացին, հետևելով իր անհատական ուղուն:

Հետազոտությունները ցույց են տվել, որ

երբ Դուք ինչ-որ բան **կարդում եք**` Դուք հիշում եք 10%-ը,

երբ Դուք ինչ-որ բան **լսում եք**` Դուք հիշում եք 20%-ը,

երբ Դուք ինչ-որ բան **տեսնում եք**` Դուք հիշում եք 30%-ը,

երբ Դուք ինչ-որ բան **տեսնում և լսում եք**` Դուք հիշում եք 50%-ը,

**երբ Դուք ինչ-որ բան արել եք ինքնուրույն` Դուք հիշում եք 90%-ը:**

Ուսուցումը լինում է օպտիմալ և արդյունավետ այն ժամանակ, երբ մարդիկ ունեն իրենց դրսևորելու, փոխադարձ համագործակցություն (ինտերակտիվ) ցուցաբերելու հնարավորություն:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ անհրաժեշտ է այնպիսի իրավիճակներ ստեղծել, որ ուսանողները յուրօրինակ, նորարարական մոտեցում ցուցաբերեն հարցին` խրախուսելով խնդիրների լուծմանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու ունակություններ` ինչը հոգեբանության տեսանկյունից համարվում է արդյունավետ:

Ստեղծել այնպիսի պայմաններ, որ

- ուսանողները ինքնուրույն փնտրեն դասընթացի ընթացքում առաջադրված խնդիրների լուծման ուղիները և մեթոդները (ընտրվում են առաջադրված մեթոդներից որևէ մեկը կամ առաջադրում են սեփական տարբերակը, հիմնավորելով լուծումները),
- ուսանողը հայտնվի գործունեություն անսովոր պայմաններում,
- ուսանողը հայտնվի անձանոթ պայմաններում` նախկինում ձեռք բերված գիտելիքների ակտիվ վերարտադրություն:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդի ներդրումը ժամանակակից կրթական համակարգում ներկայումս ամենահաջողվածն է ուսանողների պատրաստման գործընթացում: Ընդ որում «ինտերակտիվ ուսուցումը» ընկալվում է տարբեր կերպ: Ուսուցման նման մեթոդի գաղափարը ձևավորվել է 90-ականների կեսերին, առաջին վեբ-բրաուզերների և ինտերնետային ցանցի կիրառման զարգացմանը զուգընթաց: Այդ պատճառով, մի շարք մասնագետներ ընկալում են այդ ուսուցումը, որպես

ինտերնետային ռեսուրսների և համակարգչային ցանցի օգտագործում: Սակայն ընդունելի է նաև ավելի լայն մեկնաբանությունը, ինչպիսին է **համագործակցության հասկացությունը**, երբ գտնվում էք երկխոսության մեջ ինչ-որ բանի (համակարգիչ) կամ ինչ-որ մեկի (մարդ) հետ: Այս կապակցությամբ նշենք, որ հույժ կարևոր է համագործակցություն ապահովել ոչ միայն ուսանողների և դասախոսի միջև, այլև ապահովել ուսանող-ուսանող համագործակցությունը, քանի որ վերջինս կնպաստի շրջանավարտի խմբային աշխատելու և պատասխանատվություն կրելու հատկության ձևավորմանը:

Ուսուցման գործընթացը, որը հիմնված է ինտերակտիվ ուսուցման մեթոդների վրա, կազմակերպվում է այնպես, որ խնդրի լուծման բացահայտման գործընթացին մասնակցեն բոլոր ուսանողներն առանց բացառության: Համատեղ աշխատանքը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրն իր ինքնատիպ ներդրումն է ունենում: Վերջինս նպաստում է նաև, որ աշխատանքի ընթացքում տեղի ունենա գիտելիքների ու գաղափարների փոխանակում:

Կազմակերպվում է անհատական, զույգերով և խմբային աշխատանքներ, դասընթացի բնույթից կախված դասախոսը պետք է մշակի տարաբնույթ հանձնարարություններ-ուսումնասիրություններ, որոնց իրականացման համար ուսանողները պետք է կիրառեն տարբեր ուսումնառության աղբյուրներ, ինչպիսիք են գրքերը, դասագրքերը, փաստաթղթերը և այլ տեղեկատվական աղբյուրներ:

Ինտերակտիվ մեթոդները հիմնված են ուսումնառվողների փոխադարձ ակտիվ համագործակցության վրա, որի արդյունքների մասին պարտադիր դասախոսը պետք է տրամադրի հետադարձ կապ՝ գնահատելով խմբի ձեռքբերումները, ներկայացնի նրանց թերացումները և ուղղորդի այդ թերացումների ուղղումը:

Ստեղծվում է կրթական շփման միջավայր, որը բնութագրվում է բաց գործելառճով, մասնակիցների համագործակցությամբ, փաստարկներ ներկայացնելու հավասարությամբ, համատեղ կուտակված գիտելիքներով, փոխադարձ գնահատման և վերահսկման հնարավորությունով:

Դասախոսը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով ուսուցման մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարման:



**Դասախոսի** խնդիրն է դառնում ուսանողների նախաձեռնությունների համար միջավայրի ստեղծումը::

**Դասախոսի նոր դերն է.**

Դասախոսը դադարում է լինել տեղեկատվության յուրօրինակ գույք: Նա այժմ ճշգրտված տեղեկությունը ոչ թե ի սկզբանե հաղորդում է ուսանողին, այլ իրավիճակներ է ստեղծում, որ վերջինս ինքնուրույն ձեռք բերի այն՝ ուղղորդելով նրան ճշմարիտ գիտելիք ձեռք բերելու գործընթացում: Այսպիսով, նա ստանձնում է ուսումնառողների օգնականի դերը և հանդիսանում է տեղեկատվության աղբյուր:

Այդ պատճառով, ի սկզբանե ինտերակտիվ ուսուցման մեթոդը նախատեսված է եղել ավելի հասուն տարիքի ուսումնառվողների համար:

Արդի փուլում ինտերակտիվ մեթոդների առաջացումն ու զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսուցման առջև դրված են նոր մարտահրավերներ՝ ուսումնառողներին տալ ոչ միայն գիտելիքներ, այլև ապահովել ճանաչողական հետաքրքրությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև ինքնուրույն մտավոր աշխատանքներ իրականացնելու կարողությունն ու հմտությունը:

Նոր խնդիրների առաջացումն պայմանավորված է արագ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների հետ: Եթե նախկինում դպրոցում, ուսումնարանում կամ համալսարանում ստացված գիտելիքները կարող էին բավարար լինել մարդուն բավականին երկար ժամանակ և նույնիսկ երբեմն էլ ամբողջ կյանքի ընթացքում, ապա տեղեկատվական այս մեծ քանակի տեխնոլոգիաների պայմաններում այն անընդհատ պետք է թարմացնել, որին կարելի է հասնել հիմնականում ինքնակրթության միջոցով, իսկ դա մարդուց պահանջում է ճանաչողական ակտիվություն և անկախություն:

- **Ճանաչողական ակտիվությունը** նշանակում է ուսումնական գործընթացի նկատմամբ ինտելեկտուալ և էմոցիոնալ արձագանք, ուսանողների ձգտումը ուսուցմանը, անհատական և խմբային խնդիրների լուծումը, ինչպես նաև դասախոսի հետաքրքրությունը այլ ուսումնառվողների աշխատանքներին:
- **Ճանաչողական ինքնուրույնություն** – ինքնուրույն մտածելու ձգտում և հմտություն, նոր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, խնդիրների լուծման սեփական մոտեցում, ոչ միայն ուսուցանվող նյութը հասկանալու ցանկություն, այլև գիտելիքներ ձեռքբերելու մեթոդաբանություն,


քննադատական մոտեցում ուրիշի դատողություններին և սեփական դատողություններում անկախություն:

- **Ճանաչողական ակտիվություն և ճանաչողական ինքնուրույնություն** – հատկանիշներ, որոնք բնութագրում են ուսանողների ուսուցման մտավոր կարողությունները: Ինչպես և ուրիշ հատկությունները, վերջիններս դրսևորվում և զարգանում են գործունեության ընթացքում:

Առանձնացնում են ակտիվության 3 մակարդակներ՝

- **Վերարտադրության ակտիվություն** – բնութագրում է ուսումնառվողի հասկանալու, հիշելու, գիտելիքները վերարտադրելու ունակությունը և տիրապետում է դրանք ճիշտ կիրառելու հատկությանը:
- **Մեկնաբանության ակտիվություն** – կախված է ուսումնառվողի ձգտումով, հասկանալ ուսումնասիրվող նյութի իմաստը, տիրապետում է փոփոխված պայմաններում գիտելիքների օգտագործման կարողությամբ:
- **Ստեղծագործական ակտիվություն** – ենթադրում է ուսումնառվողի ձգտումը գիտելիքների ստեղծագործական ընթանմանը, առկա խնդիրների լուծման ինքնուրույն որոնումները, ճանաչողական հետաքրքրությունների ակտիվ դրսևորումները:

**Բնութով նորարարական ուսուցման մեթոդի կրթական և ճանաչողական գործունեությունը դասկարգվում է**



**Կախված ուսուցման գործընթացի մասնակիցների թվից նորարարական մեթոդով ուսուցումը դասակարգվում է՝**

1. Անհատական
2. Խմբային
3. Կոլեկտիվ
4. Աշխատանք գույգերով կամ երեքով:

**Կախված ուսուցման վայրից դասակարգվում են՝**

1. Լսարանային
2. Արտալսարանային, որն էլ իր հերթին լինում է էքսկուրսիանների և այցելությունների տեսքով:

**Անհատական համակարգչի (ԱՀ) օգտագործման տեսանկյունից բաժանվում են՝**

1. Ձեռքով (առանց ԱՀ – ի օգտագործման)
2. Խաղեր ԱՀ-ի օգնությամբ
3. Խաղեր համակարգչային ծրագրավորման ապահովմամբ:

**Խնդիրների լուծման ժամանակ կախված մասնակիցների գործունեության տեսանկյունից դասակարգվում են՝**

Առարկանների և գործողությունների աղյուսակագրում կախված տարբեր պատճառներից

Ինժիներա-կոնստրուկտորային, հետազոտական , ղեկավարման կամ սոցիալ հոգեբանական խնդիրների լուծում

Ղեկավարման, շփման և կոնֆլիկտային իրավիճակների ժամանակ, տակտիկական գործողությունների ընտրություն

Կարողությունների, ուշադրության, հմտությունների, արագ մտածողության, օրիգինալության և այլնի ցուցադրություն և ուսուցում

Օբյեկտների նախագծում և կառուցում

Գործընթացների և ենթակառույցների օպտիմալացում

## **Ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաները ձևերը**

### **Ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաների հիմնական ձևերն են՝**

- 1. Փոքր խմբերով աշխատանքները (թիմով)** – առաջատարի ղեկավարությամբ ուսանողների համատեղ գործունեությունը խմբում: Իրավասությունների և պարտականությունների բաժանման միջոցով, յուրաքանչյուր անդամի յուրօրինակ դիրքորոշման շնորհիվ առաջադրված խնդիրների ստեղծագործական մոտեցում:
- 2. Տեխնոլոգիական նախագիծ** –Անհատական կամ կոլեկտիվ գործունեություն՝ ընտրության միջոցով, որի ընթացքում բաշխվում ու համակազմվում են հստակ թեմայով նյութերը, որոնց կանոնակարգման արդյունքում էլ կազմվում է աշխատանքը:
- 3. Կոնկրետ իրավիճակների վերլուծություն (case study)** - իրական պրոբլեմային իրավիճակների վերլուծություն, որոնք բնորոշ են տվյալ մասնագիտական գործունեությանը և լավագույն լուծման տարբերակների որոնումներ:
- 4. Դերային և գործնական խաղեր** –ուսանողների կողմից իրական դերային խաղերի իմիտացիա, տարբեր աշխատանքային գործունեության իրականացման միջոցով:
- 5. Մոդուլային ուսուցում**- գիտելիքների օգտագործումը հետևյալ տեսքով՝
  - Առանձին մոդուլներ, որոնք ինքնավար են և կապված չեն դասընթացի այլ բաժիններից,
  - Փոխկապակցված դասընթացների համախմբով, որոնք սակայն կարելի է ուսումնասիրել առանձին առանձին:
- 6. Համատեքստային ուսուցում** – գիտելիքներն ընկալելու ուսանողների մոտիվացիան է, կոնկրետ գիտելիքների և դրանց ճիշտ օգտագործման հայտնաբերման ճանապարհով:
- 7. Քննադատական մտածողության զարգացում** – կրթական գործունեություն, որն ուղղված է ուսանողների մոտ տրամաբանական, ռեֆլեքսային մտածողության

գարգացմանը, որը հնարավորություն կտա առաջադրել նոր գաղափարներ և գտնել նոր լուծումներ:

8. **Պրոբլեմային ուսուցում** – նպաստում է ուսանողների ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելուն, որն ուղղված է հետագայում կոնկրետ խնդիրների լուծմանը,
9. **Անհատական ուսուցում** – հաշվի առնելով ուսանողների շահերը, անհատական ուսումնական ծրագրի հիման վրա, ուսանողի կողմից սեփական ուսումնառության կրթական նախագծի մշակում:
10. **Նախապես ինքնուրույն աշխատանքի հանձնարարում** – ուսանողների կողմից նյութերի ուսումնասիրում, նախքան դրանք կուսումնասիրվեն լսարանային դասընթացների ժամանակ:
11. **Միջկարգապահական ուսուցում** – տարբեր բնագավառներից գիտելիքների օգտագործում, առաջադրված խնդիրների լուծման համար այդ գիտելիքների խմբավորում ու դասակարգում:
12. **Ուսուցում, որը հիմնված է փորձի վրա** – ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացում, որը հիմնված է ուսուցման օբյեկտի սեփական փորձի ասոցիացիայի հիման վրա:
13. **Ինֆորմացիոն – տեղեկատվական տեխնոլոգիաներ** – էլեկտրոնային կրթական միջավայրում ուսուցում, որը կբարելավի կրթական ռեսուրսների մուտքը (տեսականորեն անսահմանափակ ծավալով և արագությամբ մուտքեր) և կմեծացնի դասախոսի հետ համագործակցությունը:

## Դասախոսի դերը դասընթացների կազմակերպման ժամանակ

Նախկինում սահմանված կարգերը, որոնք թելադրում էին դասընթացի կազմակերպման ուղղվածությունը, ներկայումս չեն արդարացնում իրենց: Դասընթացները կազմակերպվում էին այնպես, որ այն հիշեցնում էր մենախոսություն: Դասախոսը սահմանված ժամակահատվածում աշխատում էր տալ ուսումնառողին առավելագույն տեղեկություն առարկայի վերաբերյալ: Արդյունքում ուսանողը պատկերացում էր կազմում այս կամ այն խնդրի վերաբերյալ դասախոսի տեսանկյունից:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս որակյալ մասնագետներ պատրաստել, որոնք տիրապետում են մասնագիտական հմտություններին, քանի որ նրանք փորձում են առաջադրված խնդիրներին ինքնուրույն տալ լուծումներ, դերային և խմբային խաղերի միջոցով ստեղծվում են սիմուլյացիոն իրավիճակներ, որոնք մոտ են առօրյայում հանդիպող խնդիրներին: Այսպիսով հարց է առաջանում, թե ուսումնառության ընթացքում ո՞րն է դասախոսի դերը: Դասախոսը հիմնականում ուղղորդում է և աշխատում է առավելագույնս չմիջամտել ճանաչողական գործընթացին: Դասախոսի ֆունկցիաներն են՝

- Բացատրում է սպասվելիք աշխատանքի նպատակը,
- Բաժանում է ուսանողներին խմբերի,
- Խմբերին բաժանում է հանձնարարությունները,
- Վերահսկում է խմբի աշխատանքները,
- Երբեմն մանակցում է խմբի աշխատանքներին, բայց չի պարտադրում նրանց սեփական դիրքորոշումը, այլ թույլ է տալիս, որ նրանք գտնեն խնդրի լուծումը,
- Խմբի կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունից հետո, անում է եզրակացություններ:

Դասախոսի խնդիրն է, հաշվի առնելով ուսանողների տարիքային, անհատական առանձնահատկությունները, նրանց հետաքրքրությունները, պահանջումները և ապագայի նկատմամբ ունեցած ծրագրերը, ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր, որը կնպաստի նրանց մտավոր և ստեղծագործական գործունեությանը:

Դասախոսի ֆունկցիաներն են՝

- **Նախնական փուլում** – նախաձեռնել նախագծի գաղափարը կամ ստեղծել պայմաններ նախագծի գաղափարի առաջացման համար, ինչպես նաև օգնություն ցուցաբերել նախնական պլանավորման գործում:
- **Նախագծի իրականացման փուլում** – ստանձնում է օգնականի, առանձին հարցերով խորհրդատուի դերը և հանդիսանում է լրացուցիչ տեղեկատվության աղբյուր:
- **Եզրափակիչ փուլում** – որպես անկախ մասնագետ, տալիս է վերջնական աշխատանքի վերաբերյալ եզրակացություն (իրականացնում է վերահսկման – զնահատման գործառույթ):

## Ուսուցման մեթոդները

Արագ զարգացող շուկայում, պահանջարկ ունեցող մասնագետները պետք է ունենան ճկուն մտածողություն, որպեսզի կարողանան լուծումներ գտնել ցանկացած իրավիճակում: Որակյալ մասնագետ ստանալու համար անհրաժեշտ է հստակ պատկերացնել վերջնարդյունքները, որին նպատակ ունենք հասնելու: Կախված առարկայի առանձնահատկություններից, յուրաքանչյուր դասախոսը ինքը պետք է ընտրի իր առարկային հարմար ուսուցանման մեթոդը: Կան այնպիսի առարկաներ, որոնց մասին դժվար է պատկերացում կազմել միայն տեսական քննարկումների միջոցով: Օրինակ, ինժինեռական մասնագիտություններում դասավանդվող առարկաները: Եթե խոսքը վերաբերվում է սարքերին, տեխնիկային, գյուղատնտեսական մեքենաներին, որքան էլ տեսականորեն ուսումնասիրվի դրանց կառուցվածքը, շահագործման առանձնահատկությունները, հնարավոր խափանման պատճառները, միևնույն է դա բավարար չէ արտադրությունում որևէ արտակարգ իրավիճակի դեպքում ճիշտ կողմնորոշվելու համար: Արտասահմայան երկրներում լայն կիրառություն են գտել ուսումնափորձնական տնտեսություն-լաբորատորիաները, որոնք հնարավորություն են տալիս առնչվել տեխնիկական միջոցների հետ և հենց արտադրության պայմաններում ծանոթանալ դրանց շահագործման առանձնահատկություններին: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս դասընթացների ժամանակ, ոչ թե տեսականորեն քննարկել սարքերի կառուցվածքը, այլ ինտերակտիվ լաբորատորիաների միջոցով եռաչափ պատկերներ ստանալ ու դասընթացի ժամանակ մանրամասն հետազոտություններ իրականացնել:

Ներկայումս ուսումնասիրության ընթացքում լայն կիրառություն է գտել իրավիճակների վերլուծություն հասկացությունը (case-study): Այն հանդիսանում է արդյունավետ մեթոդ ուսումնասիրողների գիտահետազոտական հմտությունները ակտիվացնելու գործում: Case մեթոդը դա իրական իրավիճակների նկարագրությունն է:

Առանձնացնում են իրավիճակների մի քանի տեսակներ՝



- **Իրավիճակ - Խնդիրը**, իրենից ներկայացնում է իրական պրոբլեմային իրավիճակ: Ուսումնառվողների նպատակն է, գտնել խնդրի լուծումը, կամ գալ այնպիսի եզրակացության, որ խնդիրը լուծում չունի:
- **Իրավիճակ գնահատումը**, նկարագրում է արդեն լուծված խնդրի իրավիճակը: Ուսումնառվողների նպատակն է, իրականացնել ընդունած որոշումների կրիտիկական վերլուծություն, տալ հիմնավորված եզրակացություն կայացրած որոշումների վերաբերյալ ստեղծված իրավիճակում :
- **Իրավիճակ նկարագրությունը**, ներկայացնում է իրավիճակը և պարզաբանում է դրա ստեղծման պատճառները: Ուսումնառվողների նպատակն է, նկարագրել իրավիճակը ամբողջովին, կատարել խնդրի լուծման վերլուծություն, ձևակերպել հարցերը, տալ համաձայնություն կամ ոչ:
- **Իրավիճակ առաջխաղացում**, նկարագրում է նախկինում կայացրած որոշումների կիրառումը: Ուսումնառվողների նպատակն է, վերլուծել կայացրած որոշումներն ու ստեղծված իրավիճակը, ընդ որում օգտագործելով տեսականորեն ձեռք բերված գիտելիքները:

Case – ը պետք է բավարարի հետևյալ պայմաններին՝

- Համապատասխանի հստակ առաջադրված նպատակին,
- Ունենա համապատասխան մակարդակի բարդություն,
- Նկարագրի իրական կյանքի որոշակի գործառույթներ,
- Չպետք է շատ արագ հնանա,
- Նկարագրի տիպիկ իրավիճակներ,
- Ջարգացնի վերլուծական մտածողություն,
- Հրահրի բանավեճ: